Մեկնարկում է «Պտղահատապտղային մշակաբույսերի սերմերի և տնկանյութի մասնագիտական հավաստագրողների և փորձորոշողների» դասընթացը

Եվրոպական միության Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում (EU-GAIA) ծրագրի շրջանակում իրականացվող **«Սերմերի և տնկանյութի մասնագիտական հավաստագրողների և փորձորոշողների վերապատրաստման ծրագրի մշակում և իրականացում»** նախագիծը կազմակերպում է **պտղահատապտղային մշակաբույսերի սերմերի և տնկանյութի մասնագիտական հավաստագրողների և փորձորոշողների վերապատրաստման քառամսյա դասընթացը**: Դասընթացն ուղեկցվելու է գործնական աշխատանքներով՝ մասնակիցներին ընձեռելով տեսական դասընթացների միջոցով ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառելու և հմտությունները բարելավելու հնարավորություն:

Դասընթացի նպատակը
Վերապատրաստել պտղահատապտղային մշակաբույսերի տնկանյութը հավաստագրող մասնագետների եւ փորձորոշող-գյուղատնտեսների՝ բարելավելով մասնակիցների մասնագիտական որակավորումը, հմտություններն ու կարողությունները:

Դասընթացին կարող են մասնակցել՝
- Ագրոնոմիական կրթություն ունեցող մասնագետներ,
- Ագրոնոմիական կրթություն ունեցող ֆերմերներ,
- ՀԱԱՀ ագրոնոմիական մասնագիտություններ ունեցող դասախոսներ, ասպիրանտներ եւ մագիստրանտներ:

Դասընթացն անվճար է:
Դասերը կանցկացվեն շաբաթական 2 անգամ, երեկոյան ժամերին՝ 18:30-20:30:

Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան կատարել պտղահատապտղատու մշակաբույսերի
- մայրուտների փորձորոշում եւ որակական գնահատում,
- սերմնաբույսերի փորձորոշում եւ որակական գնահատում
- տնկանյութի փորձորոշում եւ որակական գնահատում,
- ներկրված տնկանյութի փորձորոշում եւ որակական գնահատում,
- սերմերի եւ տնկանյութի բուսասանիտարական վիճակի գնահատում:

Դասընթացին դիմելու համար անհրաժեշտ է ուղարկել CV-ն ստորեւ նշված էլհասցեով (մանրամասն նկարագրելով մասնագիտական աշխատանքային փորձը) եւ անցնել հարցազրույց:

Դիմելու վերջնաժամկետը 2022 թ. մայիսի 2-ն է:

Հարցերի դեպքում խնդրում ենք կապ հաստատել էլփոստի approbators@gmail.com հասցեով կամ զանգահարել (37493) 901 478 հեռախոսահամարով:

Նախագիծն իրականացվում է Եվրոպական միության Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման համագործակցության կողմից:
Նախագիծն իրականացնում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանը:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՀԱԱՀ-ը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության տեսակետները: